




“ՓՈՂ ՏՈՒԷՔ ՄԱՆԻ ՏԼՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԳՈՒԿ. ԺԸ. 16:

ՀԱՏՈՐ ԻԶ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ԱՊՐԻԼ 1, 1897

ԹԻՒ 4



ՀԱՆՐԱՊԵՏ

Երբ առաջին անգամ Սարանտանէն անցայ ասկէ երեսուն տարի առաջ, մեր շոգենաւը որ Պոսթոննէ Լիվերփուլ կու գար, Հայիֆաքս հանդիպեցաւ: Կարճ ժամանակ մը միայն մնացինք հոն, և որովհետև ծովէն բռնուեցանք, և հասկցած էինք թէ ընմանը օգտակար է անոր համար, ցամաք վազեցի և պարտեցայ փողոցները մինչև որ պտղավաճառի խանութ մը գտայ, ուրիշ գնեցի քանի մը լեմոն:

Հիմա Հայիֆաքս իրեն յատուկ շոգենաւային գիծ մը ունի և շաբաթն անգամ մը շոգենաւներ Հայիֆաքսէ Լիվերփուլ կ'երթան կու գան: Հիմա Պոսթոննէ շոգենաւները հոն չեն հանդիպիր: Հայիֆաքսի նաւահանգիստը աշխարհիս ամենէն ընտիր նաւահանգիստներէն մէկն է: Յամաքին մէջ ներս մտած է 16 մղոն, և ծովուն այն մասը որ նաւերը խարխիս կը նետեն քաղաքին առջևը, մղոնի մը չափ լայնութիւն ունի: Հայիֆաքս առաջին նաւահանգիստն է Բրիտանական Ամերիկայի մէջ, և գլխաւոր քաղաքն է Գանատայի սոյն մասին որ կը կոչուի

Նովա Սքոթիա, որ Նոր Սկոտիային Լատիններէնն է: Նովա Սքոթիա առաջին անգամ գտան Անգլիացի նաւաւարներ 1479ին, Գորուպուսի Ամերիկան գտնելէն հինգ տարի ետքը միայն, բայց գաղթականութիւն Հաստատուեցաւ մինչև չանցաւ հարիւր տարիէն աւելի ժամանակ, երբ Գաղղիական գաղթականութիւն մը հաստատուեցաւ հոն: Մինչև հարիւր յետուն տարի առաջ երկրին տէրերը փոխուեցան կրկին և կրկին: Նովա Սքոթիա երբեմն Գաղղիացւոց ձեռքը անցաւ, երբեմն Անգլիացւոց ձեռքը: Երբ Գաղղիացի գաղթականները արտաքսուեցան անկէ, այդ ժամանակէն սկսեալ կը կազմէ Բրիտանեան պետութեան մասը: Հայիֆաքս հիմնուեցաւ 1749ին և իբր 40,000 բնակիչ ունի:

ՇՆՈՐՀԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՐԺԱՆԻ

«Մարիամը տեսայ, մայրիկ և պատմեց ինձի ամէն բան արկածին վրայով, ո՛հ, ի՛նչ սոսկալի արկած:» Փոքրիկ աղջիկը իր մօրը քով նստաւ ծանր դէմքով. սակայն յուզուած էր և կը ցուցնէր թէ պատմելու բան մը ունէր:

«Բարեկամը ի՛նչպէս է այսօր, Շուշան», հարցուց մայրը: «Բաւական աղէկ է, նորէն կը պտրտի տան մէջ, միայն քանի մը տեղը սկըթուած և ճմլուած է:» «Կարծեմ ձիերուն խրաչելուն վրայ քու առաջուան դիտցածէդ աւելի բան պատմած է քեզի:» «Այո, գիտես որ իսկուհի առաջարկեց Մարիամի կառք հեծնել իրենց հետ: Իսկուհիի հայրը նոր զոյգ մը ձի ունի: Կարծեմ անոնք վախկոտ և խրտուող են, վասն զի երբ վար կ'իջնէին այն երկայն բլրէն, սկսան վազել և իսկուհիի հայրը չկրցաւ զսպել զանոնք: Հետզհետէ աւելի աւրագ վազեցին և երբ բլուրին ստորոտը հասան, անկիւնէն դառնալու ատեն, կառքը տապալեցաւ և մէջը գտնուողներն ամէնքն ալ դուրս նետուեցան: Իսկուհիի բազուկը կտրուեցաւ, և մօրը գլուխն այնպէս վերաւորուեցաւ որ երկու օր չկրցաւ աչքերը բանալ:»

«Շատցաւալի արկած:» ըսաւ մայրը: «Բայց աղէկնալու վրայ են, և Մարիամ կ'ըլէ թէ իրենք շնորհակալ են որ արկածը աւելի ծանր չեղաւ: Եւ, մայրիկ, Մարիամ կ'ըլէ թէ ինք երբեք, երբեք չկրնար մոռնալ իր կեանքին մէջ թէ ի՛նչպէս շնորհակալ ըլլաւ պարտական է որ անցուցած է արկած մը առանց ընդունելու վէրք մը որ արժէ յիշել:»

«Այո», ըսաւ մայրը: «Ինչ դուռն երբեք չես կրնար մոռնալ կեանքիդ մէջ



Թէ ինչպէս շնորհակալ ըլլալու ես
 «Յո՛ւ, մայր, ինչո՞ւ, ես սոսկալի ար-
 կածի հանդիպած չեմ որ սպաննուէի»
 «Սիրելիս, երբ կը խորհիս մեր սիրելի
 Տէրոջ բարութեանը վրայ որ իր դա-
 ւակները անցուց մեծ վտանգի մէջէ,
 երբեք կը խորհիս թէ որչափ երախ-
 տադէտ ըլլալու ենք որ պահուեցանք
 վտանգէ :»
 «Ես երբեք խորհած չէի ատիկա :»

ինչ աղէկ բան է առողջ ըլլալ և տես-
 նել և վայելել չորս կողմ գտնուող
 հաճելի բաները : Բայց ես շնորհակալ
 պիտի ըլլամ այն արկածներուն հա-
 մար ալ որ չեն պատահիր :»

ԹԻՊԵԹԻ ՄԷՋ ՄԵՆԱՍՏԱՆ ՄԸ
 Այս երկրին մէջ շատ մենաստաններ
 (վանք) կան վանայ և յամանեան ու-
 ըրիչ քաղաքներուն շուրջ գտնուող
 լեռներուն վրայ : Անոնցմէ մէկ քանին

տեսնուին Պուտոսային վիթխարի ար-
 ձանները ժայռի վրայ քանդակուած,
 և մինչև հարիւր ոտք բարձրութիւն
 ունեցող սիւներ՝ որ սուրբ համարուած
 մարդոց նուիրուած են : Վանական-
 ները 11,000 են : Ամէն ընտանիքի մէջ
 կրտսեր որդի մը վանական կ'ըլլայ :
 Թիպէթի մէջ արհեստի կամ երկրա-
 գործութեան ամէն գործ պէտք է որ
 օրհնուի վանականներէն, որոնք մե-
 նաստաններուն մէջ չեն մնար, հապա
 ժողովրդին մէջ կը պտըտին : Գրե-
 թէ միայն ատոնք դաստիարակութիւն
 կ'ընդունին, ինչպէս էր բանը Եւրո-
 պայի մէջ Միջին Դարերու ատենները,
 երբ ուսեալ մարդիկ գրեթէ միայն
 քրիստոնեայ վանականներն էին : Թի-
 պէթի վանականները որոնք ամէն ալ
 լհասա նստող Մեծ Լամային իշխանու-
 թեան տակն են, այս կեանքին գործե-
 լուն վրայ իշխանութիւն ունին : Ժո-
 ղովուրդը կը հաւատայ թէ գերեզմա-
 նէն անդիի կեանքին գործերուն վրայ
 ալ իշխանութիւն ունին : Պուտոսայա-
 կան կրօնքին վարդապետութիւններէն
 ոմանք բարձր են և աղնիւ : Բայց ու-
 նին շատ մը ստորնացուցիչ նախապա-
 շարումներ և սնապաշտութիւններ որ
 կը լուսարանուին դիմացի երեսին վրա-
 յի պատկերողը : Այն է աղօթքի գլան
 մը . այսինքն որուն մը որուն վրայ ա-
 ղօթք մը գրուած է : Այդ գլանը կը
 դառնայ կոթիկ վրայ, և ամէն անգամ
 որ կը դառնայ՝ գայն գործածողը կամ
 անոր տէրը աղօթք ըրած կը համար-
 ուի : Օղակներուն կցուած ծանրու-
 թիւններուն միջոցաւ, կրնայ շատ ա-
 ռագ դարձուիլ : Կան աղօթքի գլան-
 ներ որ ջրով կը դառնան . և մինչ
 մարդ կը քնանայ կամ մինչև անգամ
 ոճիրներ կը գործէ, կը հաւատայ թէ
 իրեն համար աղօթքներ կը մատուց-
 ուին գլանին միջոցաւ : Շնորհակալ ըլ-
 լանք որ մենք աղօթքի վրայ թիպէթ-
 ցիներէն շատ մը աւելի աղէկ սորված
 ենք, և գիտենք թէ ճշմարտ աղօթ-
 քը սրտէն կը բխի . և թէ մինչև ան-
 գամ բերնով ըսուած աղօթքը այն
 ատեն միայն արժէք ունի երբ մեր
 զգացումները և փափաքները կ'ար-
 տայայտէ :



Շուշան լուիկ նստու քանի մը վայր-
 կեան, և կը մտածէր մօրը ըսածին
 վրայ, որ նոր բան էր իրեն համար :
 «Ո՛չ» ըսաւ մայրը, «մենք այդ կեր-
 պով չենք խորհիր : Շնորհակալ կ'ըլ-
 լանք միայն երբ տեսնուած վտանգ-
 ներէ կ'ազատուինք, բայց քիչ կը խոր-
 հիրք այն օրերուն վրայ երբ խաղաղ
 կեանք կը վայելենք : Երբ հիւանդա-
 նալով ներսերը փակուինք, շնորհակալ
 կ'ըլլանք նորէն արևին ճառագայթ-
 ներուն տակն երթմանու համար,
 բայց երբ առողջ ըլլանք, կը մտնանք
 թէ առողջութիւնն ի՞նչ օրհնութիւն է :»
 «Ո՛հ, մայր, ես առաջ երբեք չէի
 խորհեր առօրեայ բաներու վրայ : Ո՛հ,

այցելած ենք և ուրիշներ տեսած
 ենք . բայց անոնց մէջ չկայ մէկ մը որ
 այնչափ խորտուորտ տեղի վրայ չին-
 ուած ըլլայ որչափ պատկերին մէջ
 տեսնուած մենաստանի շէնքերը : Ա-
 նոնք կը գտնուին Թիպէթի մէջ որ լեռ-
 նային երկիր է Հնդկաստանի և Չի-
 նաստանի մէջտեղ, և աշխարհիս ամե-
 նէն բարձր երկիրն է, վասն զի անոր
 քաղաքներէն և գեղերէն շատը ծո-
 վուն երեսէն 10,000 է մինչև 14,000
 ոտք վեր են : Մենաստանը Քրիստոնե-
 սայ եկեղեցիի մը չպատկանիր, հապա՝
 Պուտոսայականներու, վասն զի բոլոր
 Թիպէթցիք Պուտոսայական կրօնքէն
 են : Երկրին մէջէն անցնելու ատեն կը

ՄԱՆՍԻԿՆԵՐՈՒՆ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆԸ
 Արասքայի ներսերը, ծովեզերքէն
 վաթսուն մղոն հեռու, ուր ճամբուն
 մէկ մասը վտանգաւոր տեղէ մը կանց-
 նի, մօտերս երկու մանկիկներ ճամ-
 բորդեցին : Անոնց հայրը ու մայրը Ա-
 լասքա գաղթած էին չորս տարի առաջ :
 Մեծ բան էր դեռահասակ փափուկ

կնոջ մը Ալասքայի արծաթահանքերը երթալը ուր անկէ առաջ երբեք կին մը դացած չէր: Փոքրիկ բնակարան մը շինուեցաւ ձիւներուն և սառերուն մէջէրը, և քիչ ետքը երկու գեղեցիկ մանկիկներ աշխարհ եկան: Այս մանկիկները շատ սիրելի եղան բոլոր հանքագործներուն, մինչև անցամ անոնց մէջ գտնուող ամենէն կոշտ և բիրտ մարդոց: Այս պղտիկներուն ընծաներ կը բերէին մարդիկը ինչ որ կրնային, և շատեր որ երբեք տեսած չէին գանձը, արծաթեղէն նուէրներ և ուրիշ գեղեցիկ բաներ ընծայ կը դրկէին, միայն լսած ըլլալով անոնց վրայով թէ Եւսեփն հանքին գործաւորներուն մէջ երկու մանկիկներ կային երկուորեակ:


Բայց երկու տարի առաջ անոնց մայրը բաժնուեցաւ անոնցմէ, երբ միայն երեք ամուսն էին: Սուգի օր մը եղաւ բոլոր հանքագործներուն և ամբողջ այն կողմերուն համար երբ այս սիրելի փոքրիկ տիկինը մեռաւ: Մանկիկներուն մօրէ զրկուիլը հանքագործներուն գութը և սէրը աւելի արծարծեց անոնց վրայ: Ուստի անոնցմէ երկուքը ձգեցին իրենց հանքի գործը այդ մանկիկները խնամելու համար: Երկուորեակներուն հայրը տեսաւ թէ այս պղտիկները քիչ մը ժամանակ միայն պիտի կրնար իր քով պահել, և թէ շիտակ չէր թողուլ գանձը մեծնալու այնպիսի տեղ մը ուր իրենց մօտ կրնան չկային կամ այսպիսի մանկիկներու համար անհրաժեշտ բնակարան, ուստի անցեալ Յունիս ամուսն որոշեց Միացեալ Նահանգները տանիլ գանձը: Տղաքը մուշտակէ տուպակներու մէջ դրուելով իրենց հօրը կռնակը կապուեցան փոկերու միջոցաւ:

Ամէն մարդ ըսաւ հօրը թէ խենթ էր որ այսպիսի ճամբորդութիւն մը պիտի ընէր երկու մանկիկներովը, բայց նա համոզուած էր թէ պիտի կրնար յաջողիլ, և յաջողեցաւ ալ Մարդը յետոյ կը պատմէր թէ շատ անցամ, մինչ կը ճամբորդէր, երբ ցուրտը այնքան սաստիկ էր որ գրեթէ կը թմրէր բոլորովին, կռնակը գտնուող տուպակներուն մէջէն ձայն չէր լսել, ուստի տուպակները կը քակէր վար կը դնէր և կը տեսնէր որ մանկիկները կը խաղային մուշտակէ տուպակներուն մազերուն կամ իրարու հետ և կամ քնացած կ'ըլլային: Կը պատմէր թէ շատ զարմանալի էր որ անոնք միշտ կը զբօսնուին իր մազերուն հետ խաղալով: Երեք շաբաթ ցուրտի մէջէ և

խորտուբորտ ճամբաներէ ճամբորդելէ ետքը հայրը վերջապէս հասաւ ծովեզերքը, և մանկիկները հիմա ապահով են Միլնէտթա իրենց ազգականներուն մէջ:

ԱՇԽԱՐՀԻՍ ԱՄԵՆԵՆ ՄԵՍ ԴՊՐՈՅԸ

Լոնտոնի մէջ, Հուլիսի վերջէ քարնկէցի մը չափ հեռի, ամենէն գէշ փողոցներով շրջապատուած, կը կանգնի աշխարհի ամենէն մեծ դպրոցը: Տնօրէնն է աղնուական մը, Լորտ Ռոչիլտ, որուն վրայ ամէն աշակերտ սիրով և սքանչացուումով կը նայի, վասն զի արդարև սիրելի անձ մըն է, անոնց պահպան հրեշտակը: Այս դպրոցին մէջ կը դաստիարակուին մանչ և աղջիկ երեք հազար հինգ հարիւր տղաք, որոնց շատը օտարական շատ աղ-



ԱՂՔՐԻ ԳԼԱՆ

քատ Հրեաներու զաւակներ են: Ուսուցիչներուն թիւն է հարիւր:

Աղէկ գիտցուած է թէ այս դպրոցը Լորտ Ռոչիլտի սիրելի հաստատութիւնն է, և թէ՛ առանց անոր դարմական նպաստին, դպրոցը կարող պիտի չըլլար հոգալ իր ամբաւ ծախքերը: Անոր առատաձեռնութեան շնորհիւ է որ ամէն առաւօտ ձրի նախաճաշ կը տրուի բոլոր տղոց, որ կ'ուզեն ընդունիլ, առանց բան մը հարցնելու: Գարձեալ, Լորտ Ռոչիլտ Ապրիլ ամսուն մէջ, Հրեից Զատիկին մօտ, ամէն մէկ մանչու ձեռք մը հանդերձ և զոյգ մը կօշիկ, և ամէն մէկ աղջկան շրջագրաստ մը և զոյգ մը կօշիկ նուէր կ'ընէ:

Թէ ի՞նչ աստիճան աղքատ են այս տղաք, կրնայ հասկցուիլ սա իրողութենէն որ անոնց հարիւրին իննսունը ութը չեն մերժեր իրենց առաջարկուած ողորմութիւնը: Հոկտեմբեր ամսուն մէջ երկրորդ անգամ կօշիկ կը տրուի ամէն այն տղոց որոնց կօշիկները հաւանորէն պիտի չգիմանան եկող ձմեռուան ատեն: Հարկ չէ ըսել

թէ քիչերն են որ չեն ընդունիր: Դպրոցին մէջ շատ հաճոյական բան մըն է խնայութեան գանձանակը, զոր հաստատած է մարդասէր անօրէնը: Լորտ Ռոչիլտ խնայասիրութիւնը քաջալերելու համար տարին հարիւրին տասը շահ կու տայ գանձանակին յանձնուած բոլոր ստակներուն:

→→→

ԽԵՆԱՅԻ ԹՈՒԹԱԿ ՄԸ

Երբ Ամերիկայի մէջ երկաթուղիով ճամբորդութիւն կ'ընէի, կ'ըսէ Ամերիկացի մը, խելացի թուրքակ մը տեսայ: Տիկին մը իմ նստարանիս դիմացի նստարանին վրայ նստած էր, և թուրքակը վանդակովը ուրիշ նստարանին վրայ կը գտնուէր, երեսը կնոջ նստարանին դարձած: Գանկարծ թուրքունը աղաղակեց. «Փողին վեր երթալ կ'ուզէ» իր սիրուհին ըսաւ անոր, «Փողի բռնը (պարգամատ) մը կ'ուզէ»: Չարմանքով լսեցինք որ թուրքունը պատասխանեց, «Ոչ, ոչ, ոչ, ոչ»: Ետեւ ետքը թուրքունը, իբր թէ զղջացած՝ աղաղակեց, «Փողի բռնը կ'ուզէ, փողի բռնը կ'ուզէ»: Երբ պատասխան չընդունեց ասոր, նորէն աղաղակեց, «Չար տղայ, գէշ աղջիկ, չար տղայ, գէշ աղջիկ»: Երկաթուղիին պաշտօնեաներէն մէկը կառք մտաւ և իրեն պաշտօնին յատուկ ձայնով մը յաջորդ կայարանին անունը կանչեց, «Նորթ-Վանիթըն»: Թուրքունը գլուխը մէկ կողմ ծռելով նոյն բառը ըսաւ երկնցընելով «Նորթ-Վանիթըն»: Ասոր վրայ բոլոր հոն գտնուողները բարձրաձայն ծիծաղեցան: Եւ ասա դարձեալ զարմացուց մեզ փողի կծկուեցաւ և ծիծաղեցաւ ճիշդ կառքին մէջ գտնուողներուն պէս:

Երբունի մարդ մը կար հոն որ հազէ սաստիկ կը տանջուէր: Թուրքունը ատեն մը ահանջ դրաւ, և յետոյ երբ ծերունին նորէն հազաց, ճիշդ նոյն պէս կրկնեց հազին ձայնը: Երկաթուղիին պաշտօնեան նորէն կանչեց յաջորդ կայարանին անունը: Թուրքունը իսկոյն կրկնեց նոյնը: Ասկէ ետքը թուրքունը լռութիւն պահեց ժամանակ մը, կառքն ալ հանդարտ էր և ամէն մարդ կը կարդար կամ կը մտածէր: Երեւակայեցեք կառքին մէջիններուն զարմանքը երբ թուրքունը ճիշդ երգեց «Փառք և պատիւ», փառաբանութեան երկու տողերը: Ճամբորդները իրենց զգացած զուարճութենէն և զարմանքէն բարձրաձայն ծիծաղեցան երկար ատեն: Փողի նոյնը կրկնեց իսկոյն:

Երբ տիկինը կառքէն վար իջաւ

կրինֆիլտ, ըստ երկաթուղին այն պաշտօնեային, որուն շատ անգամ նմանած էր փոլին, թէ կը հաճէր օգնել իրեն իր բեռները կառախումբէն հանելով: «Ես կը հանեմ քու ամէն բաներդ բաց ի թութակէն: Չեմ ուզեր անոր դպրիլ» պատասխանեց մարդը: Կարծեցի թէ թռչունէն վախացած էր մարդը: Ամէնքս ալ քիչ մը մեղքըցանք մարդը: Անոր պէս սրամիտ և խելացի թութակտեսած չունէի:

→→→→→

ՓՈՂԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՆԵԼ

Գուցէ մէկը չխորհիր թէ աշխարհիս ամենէն հզօր չորքոտանին պաշտպանութեան պէտք ունի: Հզօր է նա, բայց անկարող է գլուխ ելլել իր փորձամարմին թշնամիին, մարդուն, մշտքին հետ:

Նոր ընկերութիւններէն մէկը որ սիրալիր ընդունելութիւն գտաւ փարիզի մէջ, Ափրիկեան փիղերու պաշտպան ընկերութիւնն է: Շատերու անհաւատալի պիտի դայ երբ ըսուի թէ անցեալ քանի մը տարիներուն մէջ մեռցուած Ափրիկեան փիղերուն թիւն հասած է 42,000ի, և թէ այս ընթացքով փիղն Ափրիկէի մէջէ պիտի անհետանայ ասկէ տասնհինգ տարիէն: Անցեալ Օգոստոսին 37,000 քաշ փղոսկր, այսինքն՝ 11,768 ժանիք, ծախու հանուեցաւ անձկոտ գնողներու: Այս ժանիքներուն թիւը կը ցուցնէ թէ 5,884 փիղեր սպաննուած էին:

Յիշեալ ընկերութեան անդամները, որոնց մէջ շատ մը նշանաւոր Գաղղիացիներ կը գտնուին, կը պնդեն թէ խաւար Յամաքին, Ափրիկէի, քաղաքակրթութիւնը զարգացնելու գործին մէջ Ափրիկեան փիղը մեծ դեր մը, մինչև իսկ Ասիական փիղին կատարածէն աւելի կարևոր դեր մը ունի կատարելու: Ասիական փիղը իբրև բեռ կրող կենդանի կը ծառայէ Հնդկաստանի մէջ:

Կը մնայ տեսնել թէ արդեօք ընկերութիւնը կարող պիտի ըլլայ փղոսկրի որսորդներուն յափշտակութեան գործը դադարեցնել, բայց ստոյգ է որ ընկերութեան նպատակն այնպիսի է որ արժանի է հանրութենէն պաշտպանութիւն գտնելու, և մէկէ աւելի պատճառներու համար:

ՀՈՌՈՒԹԻ ԽԱՂԱԽԻԿԸ

Առաջին անգամներ որ փոքրիկ Հոռութ շուկայէն բան գնեց: Փողոցի դռնէն դուրս ելաւ շատ լուրջ դէմքով, վաթսուս փարա իր փոքրիկ ափին մէջ ա-

մուր մը բռնած: Շուտով նորէն ետ եկաւ ձեռքը պայծառ կարմիր գունով պտուտակով (Penny) մը, բայց երեսին վրայ քիչ մը սիրութիւն կար:

«Ի՞նչ կայ, սիրելիս», ըսաւ մայրը, «չէ՞ս սիրեր քու գեղեցիկ պտուտակը»: «Կը սիրեմ, մայրիկ», պատասխանեց ծանրութեամբ, և նորէն ծռմուկեց բերանը: «Ես անձնասէր եղայ. խեղճ խանութպանին վերջին պտուտակը առի, և ա՛լ չունի հիմա», ըսաւ:

Մայրը և հօրաքոյրը շատ դժուարութիւն կրեցին մինչև որ հաւտացուցին թէ խանութպանը աւելի կ'ուզէ իր խաղալիքները ծախել քան իրեն համար պահել զանոնք: Բայց երբ Հոռութ վերջապէս հասկցաւ թէ խանութպանը երբեք չխաղար անոնցմէ մէկով, և աւելի կ'ուզէ ստակ առնել քան թէ խաղալիքներ պահել, միութարուեցաւ և սկսաւ դարձնել պտուտակը զուարթ ժպիտով:

→→→→→

ՃՇՄԱՐԻՏ ԻՇԽԱՆ ՄԸ

Գերմանական փոքրիկ մայրաքաղաքի մը պալատին մէջ իր բարեսրտութեամբ նշանաւոր Գերմանացի դ-քուսէր մը իր ծննդեան տարեդարձը կը տօնէր:

Պալատի շնորհաւորութիւնները ընդունելէ ետքը աիկիւնը տօնախմբութեան տեսարանէն քաջուելով իր սենեակին առանձնացաւ: Եւ ահա սանդուխէն վեր ելլող ոտքերու թեթեւ ձայներ լսեց: «Մ՛՛՛, ասոնք երկու փոքրիկ թռուներս են որ զիս շնորհաւորելու կու գան», ըսաւ:

Տասը տասներկու տարեկան երկու վարդադոյն պատանեակներ էին, մէկուն անունը Ալպէրթ, միւսինը Էրնէսթ: Սիրով շնորհաւորեցին դ-քուսէրն որ անոնց ամէն մէկուն տուաւ տասնական հատ Գաղղիական 20 Փրանքնոց ոսկի նուէր իր սովորութեան պէս, և անոնց պատմեց հետագայ պատմութիւնը:


«Ես ամանակաւ Հոռութի մէջ կը բնակէր կայսր մը որ սովոր էր ըսել թէ մէկը պէտք չէ որ տխրած բաժնուի իշխանի հետ տեսնուելէն ետքը: Միշտ բարիք կ'ընէր և հոգ կը տանէր իր ժողովրդին: Երբ իրիկուն մը ճաշի առանձինքը եկաւ թէ այն օրը մէկուն բարիք մը ըրած չէր, ցաւով աղաղակեց. «Բարեկամներ, օր մը կորանցուցի»: Զաւկներս, այս կայսրը ձեզի օրինակ բռնեցէք, և անոր պէս իշխանավայել կերպով ապրեցէք:»

Տղաքը ուրախութեամբ վար իջան

սանդուխէն: Պալատին դրան քով հանդիպեցան խորշումած երեսով ծեր և տառապանքներուն պատճառաւ մէջքը ծռած կնոջ մը: «Մ՛՛՛, բարի դեռահաս աղնուականներ, իմ տնակս պիտի ծախուի պարտքի համար, և գլուխս դնելու տեղ մը պիտի չունենամ: Այժմ որ ապրուստիս մի միայն միջոցն է՝ ձեռքէս առին, ողորմեցէք ծեր կնոջ մը և մարդասիրութիւն ցուցէք:»


Էրնէսթ ըսաւ թէ ինք բան մը չէր կրնար ընել: Բայց Ալպէրթ վարանած կեցաւ: Մտածեց անոր խեղճուկ պաղատող երեսին վրայ. և աչքերը արցունքով լեցուեցան: Հռոմայեցի կայսրին պատմութիւնը միտքը եկաւ: Իր քսակէն հանեց նուէր ընդունած տասը Գաղղիական ոսկին և ամբողջ պառակին տուաւ: Ինք թեթեւցած և գոհ սրտով մէկ կողմ դարձաւ, ծերուկ կինը ուրախութենէն լացի մէջ թողլով: Այդ տղան էր Ալպէրթ Իշխան որ իրաւամբ կը կոչուի «Բարի Ալպէրթ», և որ յետոյ Վիքթորիա թագուհուն ամուսինն եղաւ:

ՀԱՆՆԵԼՈՒԿ ՍՈՒՐԲ ԳԻՐԲԷՆ



Եթէ այս եւանկիւնը ձեռքնոց աստղերուն տեղը շարժք վարի տողերուն ակնարկած բառերուն զիրբերէն մէկմէկ հաստ հօրիզոնական ուղղութեամբ, եւ անկեան կողմերէն մին զեւր վար պիտի կարդացուի, Փրկչին լուսադոյն բարեկամներէն մէկուն անունը, և միւսը դէպ ի վեր Փրկչին պատուական մէկ յատուութիւնը:

1. Թէ որ . . . օրը թռչնաս, ոյժդ քիչ է,
 2. Մեջտա մը որ աստիկ կը խայտէ,
 3. . . . կարմիրը շատ յարգէ դոյն մըն էր,
 4. Շարժութեան մէկ օրը,
 5. Եւրպայտի մեծագոյն գետերէն մին (վերջին տառը զեղջուած),
 6. Աբրամի դաշնակից իշխան մը (վերջին տառը զեղջուած),
 7. Վայրն ուրիշ կը քարոզեն (հակառակ կողմէն կարգաւ),
 8. Գերանուն մը,
 9. Հայ տառ մը:
- Կ. Պոլիս



Ամերիկայի Միտոնարտի Գրական Պատմութիւն, Արտօնատէր Տնօրէն—Միւրազի Յինճանճըար Իրաւունք

ԿՈՍՏԱՆԴՆ ԹՊՂԱԿՆԵՐ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱՊՈ ՊՅՅԱՆՅԱՆ